



Երևան, 3 Օգոստ, 2020

## Տերության Աղօթք

(միասնաբար արտասանուած)

Իմասկութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմասկութիւն վբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա զիս. Եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## Ապառու 20

ԱՂՕԹՔ ԹԱԳԱԼԻՈՒԻՆ ՀԱՄԱՐ

**Տ**երը թող լսէ աղօթքներդ, երբոր անձկութեան մէջ ես.

մեր հայրերուն Աստուածը ինք թող պաշտպան ըլլայ քեզի:

Քեզի օգնութիւն թող դրկէ իր սրբարանէն,

եւ Սիոնէն քեզ զօրացնէ:

Տերը թող յիշէ քու նուէրներդ,

եւ զոհերդ ընդունելի համարէ:

Տերը սրտիդ համեմատ թող տայ քեզի,

եւ քու բոլոր փափաքներդ կատարէ:

Մենք քու բերած փրկութեամբդ պիտի ցնծանք,

եւ Աստուծոյդ յաղթանակին դրօշը պիտի կրենք:

Տերը կատարէ բոլոր խնդրանքներդ:

Հիմա գիտցայ որ Տերը կը փրկէ իր օծեալը.

անոր աղօթքին պատասխան կու տայ իր սուրբ երկինքնէն,

եւ իր զօրութեամբ անոր մեծամեծ յաղթանակներ կը պարգեւէ:

Ումանք իրենց պատերազմի կառքերուն,

ուրիշներ ճիերու կ'ապաւինին,

բայց մենք Աստուծոյ՝ մեր Տիրոջ կ'ապաւինինք:

Անոնք պիտի ծունկի գան եւ իյնան,

մինչ մենք կանգուն պիտի մնանք, գլուխնիս բարձր:

Ով Տեր, փրկէ քագաւորը, երբ քեզ կանչենք՝ պատասխանէ մեր աղօթքներուն:

## ՃԱՐԱԿԱՆ-ԱՂՕԹՔ

Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Տեր ողորմեա:

Վահանասուրբ Երրորդութիւնն, տուր աշխարհիս խաղաղութիւնն:

Եւ Հիւանդաց բժշկութիւնն, նսջեցելոց ալքայութիւնն:

Արի Վաստուած Հարցն մերոց, որ ապաւմն ես նեղելոց:

Տեր ողորմեա, Տեր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,

աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի գոտէ եւ ի զիշերի,

ի նսդիլ ի դան, ի զնալ ի ճանապարհ,

ի ննջել եւ ի յառնել, զի մի երրեք սասանեցայց.

Եւ ողորմեա՛քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

**ՕՐՈՒՅՆ ՆԻՒԹԸ**  
**ՀԱՅ**  
**ՄԱՐԳԱՐԵՒԹԻՒՆ ՈՂԲ ԵՐԵՄԻԱՅԻ**  
1 ԳԼՈՒԽ

**ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՑԱՄԵՐԸ (1:1-22)**

Ինչպէս նախապէս ալ ըսուեցաւ, թէ Երեմիայ Ասպուծոյ կողմէ ընդրուած մարգարէ չեղաւ պարզապէս Ասպուծոյ պատգամները փոխանցող միջոց մը, այլ՝ ամէն մէկ պատգամ ինք ապրեցաւ, ըստելու համար բարապեցաւ: Այդ պատգամներուն մէջ զգաց ահաւորութիւնը գալիք աղեփին, հարուածին, սովոր ու համաճարակին: Ունեցաւ պահեր, ուր չուզեց ծնած ըլլալ (20 գլխ): Ահա այդ վիճակը, որպէս ողբ Երեմիա կ'արդարացնի: Հետաքրքրական է, որ այս բաժինը, որ կը կոչուի Երեմիայի ողբը, բանագիտեղական ոճ ունի, ամէն մէկ համար երեք գողերէ բաղկացած: Այս ողբ Երուսաղէմի կործանումին, Խրայելի ժողովուրդին կոփորածի համար է, որուն սկիզբի բաժինը, այսինքն՝ նոյնինքն մարգարեւթիւնը, 52 գլուխներէ բաղկացած, կարծէք ներածական մը ըլլար այս ողբին:

Առաջին գլուխը կը բաղկանայ 22 համարներէ, որոնք երկու մասի կը բաժնուին. 1-11 համարները եւ 12-22 համարները: Առաջին բաժինը Երեմիա մարգարէն ինք կ'ողբայ Երուսաղէմի վրայ, իսկ երկրորդ մասը՝ Սիոնի աղջիկը ինք իր դժբախփութիւնն է որ կը պարմէ: Այսպես Երուսաղէմը կը ներկայացնի որպէս այրի կին: Ընդհանրապէս երկիրներ կամ քաղաքներ որպէս կին կը ներկայացնին, այսպես եւս Երուսաղէմը որպէս լացող ողբեւայրի կին:

(2 հմր) Ո՞ւր են իր սիրելիները, որպէսզի զինք միսիթարեն: Ո՞ւր են իր բարեկամները: Ընդհակառակը, նենգութիւն ըրին, իրեն թշնամի եղան: Այն երկիրները, որոնց հետ բարեկամութիւն կ'ընէր լրեցին ու հեռացան իրմէ:

(7 հմր) Երուսաղէմ իր բառապանքի ու թշուառութեան օրերը՝ իր առաջուան ունեցած բոլոր ցանկալի բանները յիշեց: Ինչպէս անառակ որդիին պարագան, այսպես եւս Երուսաղէմը յիշեց իր անցեալի լաւ օրերը, երբ կը վայելէր Տիրոջ բարիքներն ու օրինութիւնը, ու Անոր պաշփառանութիւնը: «Զանիկա պարուողները անարգեցին, որովհետեւ անոր մերկութիւնը գրեսան» (8 հմր): Ասպուածաշունչին մէջ մերկութիւնը գրեսնել, նաև կը նշանակէ մերկանալ, բայց այս պարագային ոչ մարմնական մերկութիւն իմասպով, այլ՝ բանէ մը պարապուիլ, այս պարագային՝ վառքէն, գօրութենէն: Ինչպէս որ եր պարագան Աղամին երբ մերկութիւնը զգաց:

Այն սրբարանը, որուն միայն քահանայապետը կրնար մփնել, ան ալ բարին միայն մէկ անգամ, ահա հեթանոսները սրբարանը մփան ու պղծեցին (10 հմր): Այն երկիրը, որ կաթ ու մեղր կը բխէր, հասաւ այն վիճակին, ուր ժողովուրդը հաց փնդուելէն հառաջեց (11 հմր): Հետաքրքրական արգայայփութիւն մըն է, ուր Երեմիա մարգարէն իր այս ողբով կ'ուզէ սորվեցնել, թէ պարահարները որոնք եկան Խրայելի գլխուն, անոնց մէջ գրեսնելու Ասպուծոյ մաքրը, որպէս ազդարարութեան, զգասպութեան ու ապաշխարութեան առիյա: Որովհետեւ Երուսաղէմը անմաքուր զգնուեցաւ Ասպուծոյ առջեւ: Ահա թէ ինչու Տիրոջ հրամանները արդար են, որովհետեւ Ասպուծոյ դէմ ապստամբեցաւ (18 հմր):

(19 հմր) Ահա Խրայելի իր յոյսը իր սիրականներուն վրայ դրաւ, բայց ի զուր, անոնք զինք խարեցին: Այս պարագաները կու զան սորվեցնելու թէ որու պէտք է վսփահիլ, ու որմէ պէտք է յուսալ օգնութիւնն, եւ ոչ միայն Ասպուծմէ: